սա, և տեսի և խօսեցայ ևս ընդ սմա։ Սորա ակն այնչափ է ներգործեալ ի բարբարոսս և ի տաճիկս, զի ընդ լսելն թէ գաբիտան փաւլօն է, թողեալ զնաւսն բազում անգամ փախուցեալ են. և սա անաշխատ գնացեալ զնաւսն առնու։ Յառաջնում ամի դուրսանտութեան իւրոյ զեօթն փարփարութիւն զամպէքս և ֆրղաթայս ծովասոյզ առնէ և յայսմանէ ահն մտանէ ի նոսա։ Սա ոչ միայն ի ծովու, այլ և ի ծովեզերեայ ցամաք հարկանէ և գերէ բազում անգամ. ուստի մինչև ցայժմ իբր վեցհարիւր կին գերի տաճիկ վաճառեալ և հազար երկուհարիւր և աւելի գերի արու գերի վաճառեալ, թող զսպանեալսն ի ծովու և ի ցամաքի...։ Այս այր է երկայնահասակ և գեղեցիկ և ահեղ կերպարանաւ և դեռ իբր քառասուն ամաց...։

1761 *ի մարտի* 28
[Ս. Ղազար]

Նուաստ ծառայ
Ս[տեփանոս վրդպտ.] Աբ[բահայր]

ՄԼԳ.

Նամակագրիս ակնարկած յոյն պատրիարքին հետաքրքրական կնիքը չգտանք վաւերաթղթիս մէջ։

Գերամեծար գերյարգելի Աբբայհօր մերոյ և րաբունապետի
տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի ողջոյն

Թուղթ ԻԴ

Յայնմ ամի յապրիլի 19 *ծնաւ դուստր սուլդան մուստաֆային, նմա եղին չահ սուլդան։ Եւ քանզի ծնաւ ի ռամազանին* 15, *վասն այսորիկ զտօնանման արարին զկնի պայրամին, զի սկսան ի մայիսի* 6, *և արարին Է տիւ և Է գիշեր։ Յայսմ տօնանմայի, խոնախքն տաճկաց գերազանցեցին զապարանօք դեսպանաց ֆռանկաց։ Էր խոնախ զոր քսան հազար մառչլօք զարդարեցին, և էր՝ զոր* 25000*աւ. ի մեծ պահոցս փոխեցին զպատրիարգն յունաց, բանիւք վարդապետն յունաց։ Եւ ես առաքեմ ձեզ յայսմ թղթիս զկնիք պատրիարգին յունաց, արժանի տեսութեան, զի տեսջիք թէ զորպիսի կնիքս ունին. քանզի չէն թողեալ զնշան մեծութեան ինչ, զոր չէն եդեալ ի կնիքս իւրեանց։ Զմի կնիքն ի գործ ածեն ի ստորագրութեան ողջանագրից և վկայականաց, ևն։ Զերկրորդն ի գործ ածեն և դրոշմեն ի վերայ ծալեալ ողջունագրաց։...*

Յամի տեառն 1761 *ի մայիսի* 19
[Կ. Պոլիս]

Ն. Ծ. Հ. Յակոբոս Վարդապետ
Զամչեանց. Մխիթարեան

ՄԼԴ.

Այս երկու թղթերը Խոտրջրի և Կարնոյ ներքին շարժումներու վրայօք տեղեկութիւններ կը հաղորդեն։

Առաջինը կը նկարագրէ Խոտրջրի հայ ժողովուրդի գաղթն ու տառապանքը՝ տեղական բնիկ բարբառովը։

Ա.

Գերյարգելի Հօր իմում Հայր Ս[տեփան] Վարդապետ...

... մեր Խոտորջուրն էր գիւղայ քաղաք, զորս թուով էր Դձ տուն, անցեալ օգոստոսի ամսոյն բոլորն ելեալ ի գիւղէս քօչեցին իւրաքանչիւրն մէկ յերկիրմ գնացին, որ